*Հաստատում եմ*

*Ախթալայի N 1 մ/դ*

*տնօրեն՝ ______________ (Լ. [illegible]հիյան)*

*(ստորագրություն)*

*16.09.2022թ.*

# Ախթալայի N 1 միջն. դպրոցի ուսուցչի օգնականի տարեկան աշխատանքային պլան

**2022–2023 ուստարի** **/Տաթև Չոբանյան/**

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Համագործակցությունը |
|---|---|---|---|
| 1 | Օգնել ուսուցիչներին սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացում: | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ, ուսումնական գծով փոխտնօրեն |
| 2 | Իրականացնել սովորողների ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, կատարել վերլուծություններ: | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ, մեթոդմիավորման նախագահներ |
| 3 | Բացահայտել, դիտարկել սովորողների ուսումնառության գործընթացի դժվարությունները: | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ |
| 4 | Անհրաժեշտության դեպքում կատարել երեխաների առաջին մակարդակի գնահատում: | Սեպտեմբեր-հոկտեմբեր | Դասավանդող ուսուցիչներ |
| 5 | Ներառական կրթության բազմամասնագիտական թիմին ներկայացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին: | Սեպտեմբեր | Դասավանդող ուսուցիչներ, ուսումնական գծով փոխտնօրեն, տարածքային գնահատման կենտրոնի մասնագետներ |
| 6 | Աջակցել ԱՈՒՊ –ի կազմմանն ու իրականցմանը: | Սեպտեմբեր–հոկտեմբեր | Տնօրեն, դասավանդող ուսուցիչներ, ուսումնական գծով փոխտնօրեն |
| 7 | Աջակցել ուսուցիչներին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար ԱՈՒՊ–ով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ |

| | | | |
|---|---|---|---|
| | յուրացման գործընթացին: | | |
| 8 | Օժանդակել ուսուցիչներին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում: | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ |
| 9 | Մասնակցել դասղեկի ժամերին՝ ըստ անհրաժեշտության, ելնելով տվյալ դասարանում առկա սոցիալ–հոգեբանական խնդիրներից: | Ուստարվա ընթացքում | Դասղեկներ, ուսումնական գծով փոխտնօրեն |
| 10 | Մասնակցել դպրոցի մեթոդմիավորումների աշխատանքներին | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ, մեթոդմիավորման նախագահներ |
| 11 | Հաճախակի օգնություն ցուցաբերել այն դասարաններում, որտեղ կա ուսումնական գործընթացի հետ կապված դժվարություններ: | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ |
| 12 | Իրականացնել մշտական հանդիպումներ, քննարկումներ դասավանդող ուսուցիչների հետ՝ յուրաքանչյուր սովորողի խնդիրները քննարկելու և համատեղ աշխատանքային ծրագիր մշակելու համար: | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ |
| 13 | Մշտական հսկողություն սահմանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթության կազմակերպման գործընթացին: | Ուստարվա ընթացքում | Ուսումնական գծով փոխտնօրեն, դասավանդող ուսուցիչներ |
| 14 | Ամեն ամիս կազմակերպել հանդիպումներ ԿԱՊԿՈՒ աշակերտներին դասավանդող ուսուցիչների հետ՝ կարճաժամկետ նպատակները քննարկելու և հարկ եղած դեպքում փոփոխություններ մտցնելու համար: | Ամեն ամիս | Դասավանդող ուսուցիչներ, ուսումնական գծով փոխտնօրեն |
| 15 | Անցկացնել դասալսումներ՝ նպատակ ունենալով պարզելու աշակերտների ուսումնական գործունեության և նրանց հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը: | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ, ուսումնական գծով փոխտնօրեն |
| 16 | Հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը: | Ուստարվա ընթացքում | Դասավանդող ուսուցիչներ, ուսումնական գծով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | փոխտնօրէն |